Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

378(47.925)
3-11

06 APR 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ:— ՏԵՐ.

Հ.Ս.Խ.Հ.

# ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՊԱԿԵՏԻՊ, N 1.

ՅԵՐԵՎԱՆ

1925

378(47.925)
Հ-11

05 JUN 2013
8070
57.653
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՀ–Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
(65-85-57)
22102-59
378(47.925)
Հ-11

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

1. Հայաստանի պետական համալսարանի նպատակն է․

ա) Ստեղծել ճանաչագետներ մի շարք գործնական ասպարեզների կանոնավոր ճանաչողների համար:

բ) Նախապատրաստել հանրապետության արդյունաբերական և ֆինանսական, գյուղատնտեսական ա- փործնական հաստատությունների և մանկավարժական բարձրագույն գիտական ուսումնարանությունների համար գիտնական աշխատողներ:

գ) Տարածել գիտական ամսականներ Հ.Ս.Խ.Հ. բանվորագյուղացիական խավերում, կազմակերպել Հայաստանի Պետ. համալսարանի առընթեր Ժողովրդական համալսարան մեջ պետք է ստեղծի փոքր գրավոր:

դ) Հայաստանի Պետ. համալսարանի ու- սանող կարող են լինել 16 տարեկանից վեր բոլոր երկսեռ քաղաքացիները, որոնք ավարտած են հա-

Համալսարանի առաջադրած և Լուսժողկոմատի հաս-տատած պայմանները:

Ծանոթություն.— Հայաստանի պետ. համալսարանի լսարանները բաց են բոլոր ցանկա-ցողների համար, որոնց տարիքը 16-ից անց է-

2. Համալսարանում բոլոր գիտական աշխատանքով պարապողները կոչվում են Գիտ-նական աշխատավորներ:

3. Գիտնական աշխատավորներն են.

ա) պրոֆեսորները.— Պրոֆեսորներ են կոչվում այն գիտնական աշխատավորները, որոնք ինքնուրույն դասընթաց են ավանդում, գիտական աշխատանքներ կատարում, կամ համալսարանի գիտական ուսումնական հիմնարկություններից որևէ մեկը կառավարում:

Ծանոթություն.— Թափուր ամբիոնները կարող են հանձնվել դասախոսներին Լուսժողկոմատի համաձայնությամբ:

բ) դասախոսները.— Դասախոսներ են կոչ-վում այն գիտնական աշխատավորները, որոն-ք ուսմնական դասընթացներ են ավանդում կամ աշ-խատում են ինքնուրույն կերպով, բայց որևէ պրոֆեսորի ղեկավարությամբ:

գ) գիտնական աշխատակիցները.— Գիտնական աշխատակիցներ կոչվում են նրանք, որոնք օգնում են պրոֆեսորներին և դասախոսներին, կամ պատ-րաստվում են Գիտնական գործունեության համար: Գիտնական աշխատակիցներին ընտրում է համալսարանի վարչությունը և հաստատում Լուսժողկոմատը:

Ծանոթություն.— Համալսարանի գիտնա-կան աշխատավորները հրավիրվում են նախապես մի տարով և ապա, յերբ բավարարեն առաջադրված պայմաններին, ստանում են վերջնական հաստատում:

4. Հայաստանի պետական Համալսարանը բաց է ամբողջ տարին, բայց նրա վարչությունն իրա-վունք է վերապահում պարապմունքները ընդհատել այն ժամանակ, վոր այդ ընդմիջումները տարվա ընթաց-քում յերեք ամսից չանցնեն, իսկ պարապմունքները շարունակվեն ինն ամսից վոչ պակաս: Ավելի յերկար ընդմիջումները թույլատրվում են Լուսժողկոմատի վորոշմամբ.

5. Հայաստանի Պետական Համալսարանն ունի հետևյալ ֆակուլտետները.

ա) Հասարակագիտական,

բ) Պատմա-գրականական,

գ) Գյուղատնտեսական,

դ) Բժշկական,

ե) Տեխնիկական.

Ծանոթություն. — Նոր ֆակուլտետների ավելացումը կամ եղածների վերակազմությունը կատարվում է Լուսժողկոմիսարը:

Համալսարանին առընթեր գոյություն ունի բանվորական ֆակուլտետ, որի կառուցվածքը և հարաբերությունները Համալսարանի հետ սահմանված է հատուկ կանոնադրությամբ:

6. Հայաստանի Պետական Համալսարանին առընթեր կարող են հիմնվել Գիտական ընկերություններ, դասընթացներ, Գիտական աշխատանոցներ՝ համաձայն Լուսժողկոմիսարի հաստատած հատուկ կանոնադրության.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

7. Հայաստանի Պետ. Համալսարանը ենթակա է Հ.Ս.Խ. Հանրապետության Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատին՝ ընդ արհեստագիտական Լուսավորության Գլխավոր Վարչության (Արհլուսգլխվար): Լուսժողկոմին է պատկանում թե՛ Համալսարանի և թե առանձնական կազմի մեջ փոփոխություն մտցնելու իրավունքը: Հայաստանի խորհուրդների կենտրոնական Գործադիր Կոմիտեն կարող է իր որոշմամբ ժամանակավորապես վերացնել Համալսարանի ինքնավարությունը և հարկ յեղած դեպքում նրա վրա դարձնել Լուսժողկոմի ուղղակի իշխանությանը.

8. Հայաստանի Պետ. համալսարանի թե ուսումնական գիտական և թե վարչական-տնտեսական գործունեության անմիջական կառավարությունը և ղեկավարությունը պատկանում է Համալսարանի վարչության՝ Արհլուսգլխվարի ընդհանուր վերահսկողությամբ և վերահասությամբ.

9. Առանձին ֆակուլտետներին վերաբերող գոր-ծերը վարում են ֆակուլտետի խորհուրդը և դեկանը համալսարանի վարչության ընդհանուր վերահսկողությամբ:

10. Յուրաքանչյուր մեկ. Համալսարանական ամբիոնից մի կամ մի քանի դիսցիպլինների վերաբե-րող խնդիրների մասին նախնական կազմակերպություն-ները տալիս են առարկայական հանձնաժողովները, որոնք գործում են ֆակուլտետների ղեկավարու-թյամբ և վերահսկողությամբ:

11. Առարկայական հանձնաժողովը կազմ-ված է հարակից դիսցիպլիններով իրար հետ կապ-ված բոլոր գիտական աշխատավորներից և այդ դիս-ցիպլիններին վերաբերող աշխատանք կատարող ուսանողական ներկայացուցիչներից. վերջիններիս թիվը պետք է լինի գիտական աշխատավորների թվի կեսին հավասար

12. Առարկայական հանձնաժողովն ընտ-րում է գիտական աշխատավորներից իր նախագահին. Առարկայական հանձնաժողովների թիվը, ձևերը ու չափը որոշվում է վարչության հատուկ հրա-հանգով, նախապես լսելով համապատասխան ֆա-կուլտետի խորհրդի ներկայացուցչությանը:

13. Առարկայական հանձնաժողովները.

ա. Մշակում են ծավալուն ծրագրեր, քննում դասավանդության մեթոդները և գնահատու-թյուն տալիս պրոֆեսորների և դասատուների կա-տարած աշխատանքներին:

բ. Մշակում են վերահսկողության կարգ պահանջված ուսումնական պլանի առաջադրանքների կողմից իրագործելու վրա:

գ. Տալիս են եզրակացություններ գիտական աշխատավորների մեջ դասընթացները բա-ժանելու, նրանց գիտական հետազոտությունների, ձեռնարկների և այլնի մասին:

դ. Ղեկավարում են հանձնաժողովին ենթակա օժանդակ հաստատությունները (լաբո-րատորիաներ, կաբինետներ, թանգարաններ, գրա-դարաններ, կլինիկաներ) և քննում են նրանց.

ե. Ամենամյա պարտավորական հաշ-վետվություն է առնում գիտական աշխատավորներից

թեկնածուները ևայլն։

14. Առարկայական հանձնաժողովներն իրենց որոշումները հաղորդում են անմիջապես ֆակուլտետների դեկաններին և գործադրվում են, յերբ վերջիններս մի շաբաթվա ընթացքում չեն բողոքում այդ որոշումների դեմ։

15 Առարկայական հանձնաժողովներում բոլոր հարցերը վճռվում են ձայների մեծամասնությամբ։

16. Ֆակուլտետների մարմիններն են.
ա. Ֆակուլտետի խորհուրդը.
բ. Դեկանը։

17. Ֆակուլտետի խորհրդի կազմն է.
ա. Ֆակուլտետի դեկանը. բ. առարկայական հանձնաժողովների նախագահները. գ. ամեն մի առարկայական հանձնաժողովից մի-մի ներկայացուցիչ, դ. ուսանողների ներկայացուցիչները՝ ընտրված այդ ֆակուլտետի այն ուսանողների ընդհանուր ժողովից, որոնք իրագործել են ուսումնական պլանը։ Ուսանողների ներկայացուցիչների թիվը հավասար է առարկայական հանձնաժողովների թվին։

Ֆակուլտետների խորհրդին կարող են ձայնի իրավունքով ուղարկել իրենց ներկայացուցիչներին Լուսաշխի Միությունը, Արհմիությունների խորհուրդը — ուղարկելով այն թեկնածուներին, որոնք ընտրվել են համապատասխան ֆակուլտետների աշխատանքներով շահագրգռված պրոֆմիությունների, և Արհխորհուրդը։ Նշված հիմնարկությունները ուղարկում են մի-մի ներկայացուցիչ։

18. Ֆակուլտետի խորհրդի նախագահն է դեկանը։

19. Ֆակուլտետի խորհուրդը.
ա. Մշակում է ֆակուլտետի գործունեության ծրագիրը՝ համաձայն Լուսժողկոմատից ուղարկված խնդիրների։
բ. Վերահաստատում է փոխում առարկայական հանձնաժողովի որոշումները մասամբ կամ հաստատում դրանց։

գ. Մասնագետները և գիտական ուսումնական հիմնարկությունները ու աշխատանքները բաժանում է գիտական աշխատակիցների մէջ:

դ. Յեզրակացություն է տալիս գիտական աշխատակիցների թեկնածուների մասին:

ե. Յեվ ընդհանրապես վորոշում է կայացնում ֆակուլտետներին վերաբերող խնդիրների մասին համաձայն սույն կանոնադրության կամ վարչության առաջարկության:

20. Ֆակուլտետի խորհրդի վորոշումները դեկանի միջոցով անմիջապես ներկայացվում են վարչությանը և գործադրվում են, յեթե վերջինս մի շաբաթվա ընթացքում չի բողոքում այդ վորոշումների դեմ:

21. Ֆակուլտետի դեկանին ֆակուլտետի խորհրդի առաջարկությամբ և վարչության համաձայնությամբ հաստատում է Լուսժողկոմատի Կոլեգիան:

22. Ֆակուլտետի խորհրդում քննարկվող հար-

ցերը վճռվում են ձայների մեծամասնությամբ. վորոշումների մասին կազմվում են պաշտոնական արձանագրություններ, վոր ստորագրվում են դեկանի և քարտուղարի ստորագրությամբ:

23. Դեկանն անձնապես պատասխանատու է այն ամենի համար, ինչ վոր կատարվում է ֆակուլտետում և իրավունք ունի կասեցնելու ֆակուլտետի խորհրդի վորոշումները, հայտնելով այդ մասին անմիջապես վարչությանը:

24. Համալսարանի անմիջական բարձրագույն և ընդհանրական մարմիններն են
ա. Համալսարանի խորհուրդը,
բ. Համալսարանի վարչությունը:

25 Համալսարանի խորհրդի կոչումն է Համալսարանի ընդհանուր ղեկավարությունն ու վերահսկողությունը:

26 Համալսարանի խորհուրդը հրավիրում է ռեկտորը մի անգամ ամսվա-

Համալսարանի աշխատանքները և դասերը նրան համապատասխան ուղղությամբ: Համալսարանի խորհրդին ծառայում են. ա) վարչության անդամները, բ) ֆակուլտետի դեկանները, գ) հիմն. ներկայացուցիչ պրոֆեսորներից, դ) հիմն. ներկայացուցիչ դասախոսներից և գիտական աշխատակիցներից, ե) կենտրոնական Բյուրո, իր կոմիտեի համապատասխան ներկայացուցիչը, զ) Պրոֆմիության խորհրդի Լուսատնի մի ներկայացուցիչը, է) Բանֆակի վարչության մի ներկայացուցիչը, ը) Համալսարանի բջիջի մի ներկայացուցիչը, թ) ուսանողության ներկայացուցիչներ ամեն մի ֆակուլտետից մի մի ներկայացուցիչներ, ժ) շահագրգռված ուսումնարաններից մի մի ներկայացուցիչ:

27. Համալսարանի խորհրդում նախագահում է վարչության նախագահ-ռեկտորը:

28 Համալսարանի խորհրդի որոշումները և ներկայացումները վարչության նախագահի միջոցով ներկայացվում են Լուսժողկոմին:

29. Համալսարանի վարչության անդամներն են ռեկտորը և 2 պրոռեկտոր:

30. Վարչության նախագահին և պրոռեկտորին Համալսարանի խորհրդի ներկայացրած թեկնածուներից նշանակում է Լուսժողկոմը:

31 Լուսժողկոմը վարչության նախագահ - ռեկտոր կարող է նշանակել և այլ անձի, երբ համալսարանի խորհրդի երկրորդ անգամ ներկայացրած թեկնածուները չեն համապատասխանում Լուսժողկոմի պահանջներին

32 Համալսարանի վարչությունը՝

ա. Հաստատում է կամ բեկանում ֆակուլտետների խորհրդի և Առարկայական հանձնաժողովների որոշումները:

բ. Նշանակում է ֆակուլտետների խորհրդի համաձայնությամբ դեկաններին և գիտական կաբինետների վարիչներին. ներկայացնելով Լուսժողկոմատին ի հաստատություն

գ. Հաստատում է գիտական աշխատողներին.

Գր.

ներին և դասատուներին :

Դ. Նշանակում և փոփոխում է Համալսարանի բոլոր վարչական պաշտօնեաներին :

Ե. Կազմում է Համալսարանի տարեկան նախահաշիւը :

Զ. Նախաձեռնութիւն ունի բոլոր ուսումնական հարցերում :

Է. Համալսարանի անունից վարում է բոլոր բանակցութիւնները թէ կառավարութեան և թէ բոլոր հիմնարկութիւնների հետ :

Ը. Ի կատար է ածում բոլոր վերադաս մարմինների Համալսարանի վերաբերեալ կարգադրութիւնները :

33. Համալսարանի վարչութեան այն անդամը, որ ուսումնական գիտական մասն է վարում, նշանակվում է պրոֆեսորների շարքից.

34 Համալսարանի վարչութիւնը իր իրաւասութեան ենթակայ բոլոր մարմինների վրայ մանրամասն քննութեան համար կարող է ունենալ իր մշտական գործող հանձնաժողովներ և իր ժամանակաւոր խորհրդակցական ժողովներ

Ց. Քիւրքեան Կեդրոնական

ՀՀ Ազգային գրադարան
NL0233146

54.653